

Ի ՏԵՐ ՀԱՆԳՅԱՎ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Օգոստոս 18:

«Զի ցանկալի էր Տեառն անձն նորա»:
(ԻՄԱՍՏ. Դ 14)

Այս թվագրությունը երկար և անջնջելի պիտի մնա հայաշխարհի սերունդների հուշամատյաններում. ի Տեր հանգյալ Ամենայն Հայոց Հայրապետն ու Ազգապետը, Տ. Տ. Վազգեն Ա-ն՝ ՎԵՀԸ:

Նա քառասուն տարիներ ստանձնելով Հայոց Հայրապետության ծանրագույն լուծը, Մեծն մարգարեի նման իր հովվական գավազանը ձեռքին, Ս. վեստյաց երկրի բաղձանքն ու տենչանքը հոգում ու մտքին և Աստծո անունը շրթներին, անխոնջ ու անհոգնաբեկ առաջնորդեց ու խնամեց, հուսադրեց ու սիրեց, այդ սիրով իսկ ապրեց ու ապրեցրեց հայրական գութի կարոտյալ անորոշության մեջ խարխափողներին՝ հարաժամ բոցավառելով մեր մեջ Աստվածաշունչ պատգամը, ըստ որի. «Նորոյ երկնից և նորոյ երկրի ըստ աւետեացն հայեցեալ սպասեմք, յորս արդարութիւնն բնակէ» (Բ Պետր. Բ 13):

Հավերժի ճամփորդի ուղին բռնեց Վեհափառը, մեկնեց՝ երկնքում հանդիպելու իր նախորդ մեծերին, մեկնեց՝ ներկայանալու և խոնարհվելու Աստծո Աթոռին և ընդխառնվելու հաղթական Եկեղեցու հաղթանակած զորաբանակին, որտեղից առավել ուժականություն ստացած իր անթարթ արծվաթռիչ հայացքով պիտի հսկի ու խնամարկի՝ երկնային լույս խորանների մեջ ճախրող հոգու թևերը տարածելով հայոց երկնակամարին ի պահպանություն:

Բարի երթ Քեզ, Վեհափառ Հայրիկ, Քրիստոսատուր Հոտապետ, «Հայրապետ սուրբ և անբիծ», հոգուդ միաձուլված ու միախառնված ժողովրդիդ աղաչանքները տար դեպի Բարերարն Աստված, որպեսզի ողորմության ար-

Սրտաքուխ արձանագրություններ հիշատակի մատյանում

գասիք երկնային մանանան ցողի Վեհիդ ածուի վրա: Բազում անգամներ հանդիպելով աշխարհային ալիքների և փոթորիկների, թերահավատությամբ կալանված Պետրոսի պես երկնչեցինք, սկսեցինք ընկղմվել և աղաղակել. «Հայր, փրկեա զմեզ», և Քո Տերունական Աջից կառչելով լսեցինք Աստվածորդու խոսքի արձագանքը. «Թերահավատ՝ ընդէ՞ր երկմտեցեր», որ դարձավ մեզ համար անմարտնչելի վահան ու պարիսպ ամրության, ճանապարհ ազատության և հույս հաստատության վերստին նորոգման ու միխիթարության: Հայրապետիդ խնդրանքներին ու աղոթքներին ի պատասխան մենք ևս ականջալուր եղանք երկնքի բարձունքներից հնչող Տիրոջ բարբառին. «Զհիգին ճշմարտութեան, զոր աշխարհս ոչ կարէ ընդունիլ, զի ոչ տեսանէ զնա և ոչ ճանաչէ զնա, բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցի և ընդ ձեզ եղիցի: Ոչ թողից զձեզ որբս. գամ առ ձեզ»:

Կարծես տարիներ առաջ Քո նախորդի՝ երջանկահիշատակ Գևորգ Զ մեծագործ Հայրապետի մահախոսականում արտասանված տողերը Քեզ համար էիր նախանշում, որ և մենք Քո իսկ աստվածախոս լեզվով ասում ենք. «Միթե՞ մենք թաղեցինք Վեհափառը: Ան մեր մեջն է: Անոր հոգին մեզի հետ է, մեզ կուղեկցի՝ ալ ավելի սիրելու զիրար և Իր սուրբ գործը շարունակելու»: Ամեն:

Օգոստոս 25:

«Ի վախճանիլ առն արդարոյ ո՛չ կորնչի յոյս»:
(ԱՌԱԿ. ԺԱ 7)

Սուրբ Էջմիածնի շքեղազարդ Վեհարանում խաղաղությամբ նիրհող Վեհափառը սպասում էր Մայր Աթոռիս միաբանների և Սրբազան եպիսկոպոսների այցելությանը, սակայն այս անգամ ոչ թե Մայր տաճար Սուրբ և անմահ Պատարագին հաղորդվելու թափորի ակնկալությամբ, այլ երկրային տանը վերջին հրաժեշտի և դեպի Երկնային օթևան ճանապարհորդելու խորհրդով:

«Եւ ցանեցից ի վերայ ձեր ջուր սուրբ և սրբեսջիք յամենայն պղծութեանց ձերոց և յամենայն կռոց ձերոց սրբեցից զձեզ»:
(Եզեկիել)

Այս օրը, ժամը 14.00-ին, նախագահությամբ Հունահայոց թեմի առաջնորդ Տ. Ռոկան արքեպիսկոպոս Գալփաքյանի, մասնակցությամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանի և Մայր Աթոռիս միաբանների, տեղի ունեցավ Վեհափառ Հայրապետի լվացման կարգը, որ-պեսզի նա ոչ միայն մարմնով, այլ խորհրդաբար նաև հոգով ու մտքով մաքրագործված, սրբազան առաքյալների ու հայրապետների հետ անարգել մուտք գործի Երկնավոր Փեսայի լուսավորյալ առագաստը: Այս շնորհաբաշխ արարողությունը հիշատակություն ու վերակոչումն էր այն խորհուրդի, երբ Տերը Վերնատան մեջ անճառելի խոնարհությամբ ամենասուրբ ձեռքերով լվաց Իր իսկ աշակերտների ոտքերը, մաքրելով նրանց մեղքի արատից և

ապականությունից՝ զարդարելով աստվածային խաղաղությամբ «գնալ ի յերկիր ուղիղ».

«Արդ և մեք ծառայքս քո կատարեմք զնոյն մաքրաբար խորհուրդն քո: Վասն որոյ աղաչեմք զքեզ մարդասէր Տեր, առաքեա՛ ի մեզ և ի ջուրս յայս զնոյն մաքրարար շնորհս քո՝ և օրհնեա՛ և սրբեա զսա, որով լուացեալ զմարմին սորա սրբեացի յամենայն արատոյ մեղաց և ի խաբէութեանց աշխարհիս: ԱՄԷՆ»:

Տան կարգի հոգեթով արարողության պահին, առաքյալի խոսքին համահունչ, կարծես լսվում է այս պատերի մեջ առէջված պատգամը Ամենայն Հայոց Հայրապետի. «Եւ փութամ ճեպիմ միշտ զձեզ յորդորել. զի և յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս առնիցէք զյիշատակս այսոցիկ» (Բ Պետ. Ա 15):

Այս սրբաշունչ ծիսակատարությունից հետո ագաթափորը Վեհափառին ուղեկցում է դեպի Երևան՝ Արարատյան Հայրապետական թեմի Առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցի:

Դագաղն ուղեկցում էին թեմի 12 քահանաներ՝ ուսաբարձ տանելով նրան, ով շուրջ քառասուն տարի իր հոգևաբեկ ուսերին էր կրել հայ ազգի Հովվապետը լինելու ծանր լուծը:

Ս. Սարգիս եկեղեցում դագաղը դրվեց դիասեղանին և ժամը 12.00-ին կատարվեց հոգեհանգստի պաշտոն: Հանդիսադիրն էր Երուսաղեմի հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը:

Հոգեհանգստին ներկա էին Ամենայն Հայոց Կաթողիկոսի հուղարկավորության կազմակերպման պետական հանձնաժողովի անդամները՝ ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանի գլխավորությամբ, սփյուռքահայ գործիչներ, մտավորականության, հասարակական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հընթացս արարողությանը միացավ Բեյրութից նոր ժամանած Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ը: Հոգեհանգստի ավարտին ագո խոսք ասաց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը.

«Վշտակիր սիրեցյալ հավատացյալներ,

Ազգիս Հայրապետը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը, այսօր կրկին այցի է եկել քաղաքամայր Երևանի Առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցի: Բայց սևաթույր է ժապավենված Սուրբ Սեղանը մեր խորանի, և վիշտն ու կսկիծն է տիրել մեր հոգիներին, ու ագում ենք մենք ազգովին, քանզի մեր սիրելի Վեհափառի այս այցը վերջինն է և այց է հրաժեշտի: Ոչ ևս է այլևս Հայոց Հայրապետը: 1994 թվականի օգոստոսի 18-ին, առավոտյան ժամը 7.15-ին, փակեց աչքերը հավիտենապես սիրելի Վեհափառը: Մի քանի օր ևս և մենք կզրկվենք բիբլիական Հայոց Հայրապետի լուրի տեսությունից:

Ռումինիայի Բուխարեստ քաղաքում ապաստան գտած Պալճյան բարեպաշտ հայ տարագիր ընտանիքին 86 տարիներ առաջ Տերը շնորհեց միանուճար արու զավակ: Կոչումի ձայնին ունկնդիր, Լևոն-Կարապետ Պալճյանը, 50 տարիներ առաջ, Աստված փնտրելու ճանապարհին գտավ Սուրբ Էջմիածինը ու խոնարհվեց իր ճակատագրի առաջ: Եվ 10 տարի հետո, արդեն Ռումինահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Պալճյանը, նախախնամական կամքն Աստծո և ազգի, ընտրվեց Կաթողիկոս Ամենայն Հայոց և բազմեց Լուսավորչի թափուր գահին:

Տաճ կարգ



Եկեղեցի հիմն

Հայոց Հայրապետի մուտքը Սուրբ Էջմիածին որակվեց որպես մուտք Ամենայն Հայոց Անձանոթի: Արդարև, ինչպես գիտնային, որ 4 տասնամյակ հետո Հայոց 130 հայրապետների աստղաբույլում նա պիտի դառնար լուսավառ մի աստղ ու «Վազգեն» համատեղությամբ պիտի լուսավորեր մեր հավատքի լուսո խորան Սուրբ Էջմիածինը: Ինչպես գիտնային, որ համատարած անհավատության և աստվածմերժման դժնդակ տարիներին Վեհափառը պիտի կարողանար հաղթահարել երկաթյա վարագույրների ճնշող ծանրությունը և կամուրջ հանդիսանալ Հայրենիք-Սփյուռք ափերի միջև: Ինչպես գիտնային, որ այսօր ամենայք ոք պիտի դժվարանա համապարփակ ընդգրկել և ամբողջապես ներկայացնել Հայոց մեծ Հայրապետի բազմաբեղուն գործունեությունը հոգևոր եկեղեցաշինության, ազգային մշակութային, կրթական ու գիտական, հասարակական, միջեկեղեցական ու միջազգային ասպարեզներում:

Այսօր հեռանում է Հայրապետն Ամենայն Հայոց՝ որպես խորհրդանիշ ազգի և Մայր Եկեղեցու նվիրյալ հայրենասերի, որպես խորհրդանիշ իմաստության, արիության, սիրո, խաղաղության և ազգերի խաղաղ գոյակցության ջատագովի, քանզի ապրեց նա և առաջնորդվեց «Խորհուրդ մարմնոմահ է, խորհուրդ հոգու՝ անմահություն» ավետարանական պատգամով: Ինչպես չգալ ու չարտասվել հոգվով, որն սպեղանի է և մխիթարություն այս մեծ վշտի, ինչպե՞ս չգալ և ինչպե՞ս չտրտմել, երբ բաժանման այս պահին, մահճի մեջ իսկ, ձեր շուրջ համախմբված ողջ հայորդյաց Դուք դարձյալ պատգամում եք. սիրել զմիմյանս, պահել հավատը առաքելական, մնալ միասնական, մնալ հավատարիմ «ազատութիւն երկբայականս, միութիւն ի կարեւորս, սէր յամենայնի» մեր սուրբ նախնյաց պատգամին: Եվ թիւն ի կարեւորս, սէր յամենայնի» մեր սուրբ նախնյաց պատգամին: Եվ այսօր, դժվարին մեր ժամանակներում, մենք վկան ենք, ականատեսը այն իրողության, թե ինչպես ժողովուրդը, հայրենի իշխանությունները, ընկերային-հասարակական բոլոր կազմակերպությունները միակամ ու միախորհուրդ ձեզ են բերում իրենց սիրո, նվիրումի, հոգու ջերմության այն բազում լիցքերը, որ այնքան շռայլորեն ստացել են Ձերդ Սրբությունից անխտիր՝ անկախ հասարակական և ընկերային շերտերից և դիրքից: Ու երախտապարտ ժողովուրդն հայոց արժանվույնը մատուցեց իր մեծանուն Վեհափառին, Հայոց երկնապարգև Հայրապետին՝ առաջինը նրան շնորհելով նորանկախ Հայաստանի Հանրապետության Ազգային հերոսի վեհ կոչումը. «զՔոյս ի քոյոց քեզ մատուցանեմք»:

Վեհափառ Տեր, երիցս երջանիկ եք Դուք նաև այն իրողությամբ, որ իրագործված տեսաք Ձեր տարաձիգ կյանքի ամենանվիրական բաղձանքը՝ Ազատ ու Անկախ Հայոց աշխարհը, որի սրբագործված եռագույնն այսօր իսնարհված է Ձեր շիրմին և ամենուր:

Հանգիստ քեզ, սիրելի Վեհափառ, դեպի հավերժություն քո ճանապարհին: Մենք անվերկբայորեն հավատում ենք, որ Երկնային Արքայության հանդիսանում երանելի հայրապետները մեր, ի գլուխ ունենալով մեր Տեր Հիսուս Քրիստոսին, ուրախությամբ պիտի դիմավորեն Ձեզ ու, ձեռամբ Փրկչի, զարդարեն Ձեր իմաստուն ու բազմախորհուրդ Ճակատը հավիտենական լուսեպսակ դափնիով:

Վեհափառ Տեր, «Եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո»:

Հոգու մեր պարտքն է նաև՝ այս պահին բերելու մեր խորին երախտագիտությունը Հայրենի իշխանություններին, որ նպաստեցին այնքան նա-

խանձախնդրորեն և փառաշուք կազմակերպել Հայոց Հայրապետի հրաժեշտի Աջահամբույրի և հուղարկավորության արարողությունները»:

Հոգեհանգստի պաշտոնից հետո սկսվեց մարդկանց հոսքը դեպի եկեղեցի: Ամենայն Հայոց Հայրապետին հրաժեշտ տալու էին գալիս Իր՝ Հայրապետական թեմի հավատավոր զավակները: Վեհափառի իսկ խոսքերով ասած, «խիտ շարքերով, լուռ, ինքնամփոփ, ինքնամոռաց, առանց շատախոսության, առանց ցուցադրական դրսևորումներու... Հայ հոգին է, որ հեղեղի պես կհոսի անվերջ, համաչափ, կարգապահ»: Ահա այսպես՝ «նույն զարկով տրոփող սրտերով, ամեն տեսակի տարբերություններ թոթափած, եղբայրացած» ժողովուրդը գալիս էր վերջին համբույրը դրոշմելու այն աջին, որը քառասուն տարի գավազան ու խաչ էր բռնել, քառասուն տարի օրհնել էր իրեն և այն սրբալույս մյուռոնը, որով արդեն հայորդիների մի քանի սերունդ են դրոշմվել հավիտենական կյանքի համար: Հիրավի մեր Հայրապետը կարող էր կրկնել Փրկչի խոսքերը. «Ձեզնից ո՞վ կարող է մեղադրել ինձ մեղքի համար»:

Մինչև ուշ երեկո, մինչև ժամը 21-ը, չէր ընդհատվում մարդկանց շարանը դեպի Ս. Սարգիս եկեղեցի: Այդ ամբողջ ընթացքում չորս քահանաներ Սուրբ Ավետարան, իսկ Սևանի դպրանոցի սաները՝ Սաղմոսաց գիրք էին կարդում Վեհափառի գլխավերևում, իրենց աղոթքներն ուղղելով առ Աստված հոգու հանգստության համար նրա, ով քառասուն տարի աղոթաբան էր եղել մի ողջ ժողովրդի, որի մեջ աղոթողներն այնքա՜ն քիչ էին, իսկ «Հայր մեր» շիմացողներն այնքա՜ն շատ:

Օգոստոս 26—27:

«Ընդունելի են առաջի Տեառն ճանապարհք մարդոյ արդարոյ վասն նոցա և թշնամիք բարեկամք լինին»: (ԱՌԱԿ. ԺԵ 28)

Օգոստոսի 26-ին, առավոտյան ժամը 10.00-ին, Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցում, նախագահությամբ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Բ Հայրապետի և աղոթական ներկայությամբ Երուսաղեմի և Կ. Պոլսո Հայոց Սրբազան Պատրիարքների ու Հայաստանյայց Եկեղեցու թեմական առաջնորդների, նաև մասնակցությամբ ՀՀ նախագահի, փոխնախագահի, վարչապետի, կառավարության անդամների և ՀՀ-ում օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչների, տեղի ունեցավ հոգեհանգստյան արտառուչ արարողությունը, որ հայցումն էր ամբողջ հավատացյալ հոտի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու. «Տէ՛ր, փրկեա զհոգի ծառայիս քոյ և արժանաւորեա համարձակապէս մտանել առաջի քոյ դէմ յանդիման. և ուրախութեամբ կալ յանդիման փառաւոր աթոռոյ քոյ»:

Հավարտ հոգեհանգստյան սրբազան արարողության, Վեհափառի մարմինը դուրս է բերվում Սուրբ Սարգիս Եկեղեցուց և սգաթափորով ուղեկցվում մինչև ավտոմեքենաների շարասյունը, որը համընթաց ուղղություն է վերցնում դեպի Սուրբ Էջմիածին, դեպի այն սրբավայրը, որտեղից Հայոց Հայրապետը հովվեց, խնամեց և օրհնեց իր զավակներին:

Սուրբ Էջմիածինը սպասում էր իր Սպասավորին և Գահակալին:

Մայր տաճարի դառպասների մոտ Մայրավանքիս միաբանությունը Ղազարոսի հարության փառաբանության՝ «Այսօր գոլով ի Բեթանիա» շարականի երգեցողությամբ, թափորով առաջնորդվում է դեպի տաճար: Նախքան Եկեղեցի մուտք գործելը, համաձայն մեր Եկեղեցու Սուրբ Հայրերի իմաստուն կարգավորության, այն չորս անգամ դադար-հանգիստ է առնում շարականների երգեցողությամբ, արբալիր աղոթքների և սաղմոսների, Սուրբգրային հատվածների ընթերցմամբ՝ խնդրելով. «Ցանձն արա զմեզ ուղղափառ հովուի, զի կեանս սորա դու պահէիր զմեզ և պահեցեր, և այժմ ևս սուրբ հոգումի, զի կեանս սորա դու պահէիր զմեզ և պահեցեր, և այժմ ևս սուրբ հոգումովդ և խաչիդ քով արբով պահեա զմեզ: Դու Տէր՝ եղիցիս պահապան մարմնոյ սորա և հանգիստ հոգւոյ սորա, յոյս հարութեան ի մեծի աւուր գալըստեանն»:

Ապա Վեհափառի մարմինը տանելով դեպի եկեղեցու դուռը, «Զողորմութեան քո զդուռն բաց մեզ Տէր» շարական-աղոթքով ամբողջ թափորը մուտք է գործում եկեղեցի, որտեղ ընթերցված աղոթքները և մաղթանքները աղաչանք են առ Աստված, որպեսզի Տերը Իր ողորմության Երկնային դռները բացելով՝ գթառատ ձեռքերի մեջ ընդունի մեր սիրելի Հայրապետի հոգին, «Զի և սա եղեւ փոքր ի շատէ սպասաւոր Տէրութեանդ քոյ», և քանզի «Օրէնք ճշմարտութեան էին ի բերան նորա և անիրաւութիւն ոչ գտաւ ի շրթունս նորա» (Մաղաք. Բ 6):

Օգոստոսի 27-ի վաղ առավոտից սկսյալ մինչև ուշ երեկո չէր դադարում հավատացյալների հոսքը դեպի Սուրբ Էջմիածին՝ վերջին հրաժեշտը տալու և վերջին աջհամբույրը ստանալու իրենց հանգուցյալ Հովվապետից: Տխուր էր նաև Հայոց երկինքը, երեկոյան տեղացած անձրևն էլ կարծես եկավ իր արցունքի շիթերը խառնելու հայ հոգուն ու սրտին, զգայապես հաղորդակից դառնալու նրա խոր վշտին և պաղորակ կաթիլներով ամոքելու՝ սփոփելու այն. «Տէր Աստուած մեր, հեղ աղբիւրաբար զառատաբուղխ շնորհս Հոգւոյդ Սրբոյ ի գանձս յայս պատուական, որ է տաճար կամաց քոց սրբոց: Որով ընկալեալ սորա զսուրբ օծումն և այդր ևս ճշմարտապէս գահակալեցէ և ընդ այլ ճշմարիտ հովիւսն զբրաբիոնն յաղթութեան ընկալցին ի քէն Քրիստոս. ԱՄԷՆ»:

Օգոստոս 28:

«Ահա հրաժարիմ ի քէն սուրբ Եկեղեցի:
«Ահա հրաժարիմ ի քէն սուրբ եկեղեցի:
ի կոչումն վերանորոգողին Քրիստոսի
Աստուծոյ մերոյ»:

(ՄԱԾՏՈՑ)

Կիրակի, առավոտյան ժամը 10.00-ին, սկսում է սուրբ և անմահ պատարագը և հընթացս այս արբազան խորհրդի էլ կատարվում է վերջին օծման կարգը: Սուրբ պատարագն ընթանում է մինչև «Ողջոյն»-ի պահը, երբ, համաձայն արբազան «Մաշտոցի», Հայրապետի մարմինը «բառնան քահանայքն և հանեն ի բեմն առաջի սրբոյ սեղանոյն»:

Օծման խորախորհուրդ կարգը կատարում է Մեծի Տանն Կիլիկիո Տ. Տ. Գարեգին Բ Հայրապետը: Խորհրդականորեն հանգուցյալ Հովվապետը վերջին ողջույնն է տալիս սուրբ եկեղեցուն, արքության սեղանին, քահանայից

դասին ասելով .«Ողջոյն քեզ սուրբ եկեղեցի: Ողջոյն քեզ սեղան սրբութեան: Ողջոյն ձեզ դասք քահանայութեան. ես ճանապարհորդեցի առ արարիչն իմ»: Իրենց սիրեցյալ Հայրապետի ողջույն-հաղորդությունից անմասն չեն մնում նաև եկեղեցու հավատացյալները. «Ողջոյն ձեզ մանկունք եկեղեցւոյ: Ողջոյն ձեզ հաւատացեալ եղբարք իմ ի Քրիստոս: Ողջոյն ձեզ համօրէն ժողովրդականք. ես ճանապարհորդեցի առ Քրիստոս յոյսն ամենեցուն»:

Այս սրբազան և անճառելի երկնային պտարողության ընթացքում Վեհափառի մարմինը երեք անգամ պտտեցնում են Սուրբ Սեղանի շուրջ, «որ ընշանակէ՝ զհամբուրելն նորին զսեղանն և զբոլոր եկեղեցին և զսրբութիւնսն ամենայն և զհրաժարական ողջոյնն տալն»: Ապա դամբանական խոսքով հանդես եկավ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ը.

«Վեհաշուք նախագահ Հայաստանի Հանրապետության,

Հարգարժան ներկայացուցիչներ Եկեղեցիների և կրոնքների,

Պատվարժան ներկայացուցիչներ պետությունների և դիվանագիտական ներկայացուցիչներ,

Հավատացյալ, հավատարիմ ժողովուրդ հայոց,

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, Ամէն»:

«Ես եմ հովիվն քաջ, հովիվ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» (Հովհ. Ժ 11):

Երանի այն հոգևորականին, որ կրնա իր անձովը, իր կյանքովը, իր գործովը անկեղծաբար և ոչ թե ինքնախաբեական և ինքնագովական ձևով մեր Տիրոջ այս խոսքին արձագանքը հանդիսանալ: Եվ որովհետև այժմ մեր սիրեցյալ եղբայրն ալ չի կրնար իր շրթունքները շարժիլ, ես իր տեղը կըսեմ. «Դո՛ւն եղար հովիվը քաջ, որ կյանքդ ամբողջ ընծայեցիր քո բանավոր հոտին՝ հայ ժողովրդին»:

Կհավատամ, որ ամենայն խղճի հանդարտությամբ և լիիրավ հարազատությամբ այս խոսքին թարգմանը եղավ իր անձը՝ իր գործով և իր կյանքով: Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Անհավասիկ իր վախճանումեն ասդին, տասնօրյա այս շրջանին, դուք բոլորդ վկան եք այն ճշմարտության, որ ողջ այս աշխարհի սիրտը կտրոփե զարկերովը Սուրբ Էջմիածնի, որովհետև խիղճը հայության հոս է, և այս սիրտը իր բազում անուններու շարքին, 129 անուններու շարքին այսօր կավելցնե պայծառ լույսով անուն մը՝ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս, որովհետև այս Էջմիածնի գաղափարին խորհուրդին և նվիրական առաքելության նոր փայլ տվավ, նոր անուն տվավ ինքը՝ իր անձին ճառագայթումովը, իր կյանքի մոմավառությամբը և իր գործին ճանաչումովը: Ճիշտ է, որ իր մահն է, որ այսպես համախմբած է մեզ բոլորիս Հայաստան աշխարհի չորս կողմերեն՝ հյուսիսեն, հարավեն, արևելքեն ու արևմուտքեն և աշխարհի չորս անկյուններեն հայարյուն մարդիկ և հայությամբը հեռաքրքիր, նախանձախնդիր և հայությանը սիրող անձինք՝ օտար Եկեղեցիներե ու ազգերե. բայց մահը չէ մեզ այստեղ կանչողը, ինքն է՝ իր անձովը, ապրած կյանքովը միշտ հիշատակելի և իրականացուցած գործովը միշտ ոգեկոչելի: Այժմ, երբ մարմինը օծեցինք, և քիչ ետքը երբ զայն այլևս հողին պիտի հանձնինք և հողայնության ճակատագրին պիտի երթա բոլորիս մարմիններուն նման, ինքն է, որ կմնա սրտերուն մեջ ներկա ու պատմության ժառանգության մեջ շաղախված իբրև անուն պանծալի: Այսօր, այս պահուն իմ հոգևոր եղբայրներու և

Սուրբ Պատարագի խորհրդավոր պահին

Սուրբ Պատարագի խորհրդավոր պահին

Հրաժեշտի խոսք Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի

Վերջին օծում՝ ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի

Հայաստանի պետության բոլոր ներկաներում առջև ես կընծայեմ բանավոր ծաղկեփունջը, զանոնք բաղելով ձեր բոլորի սրտերեն և մտքերեն:

— Երանի՜ քեզ, ոգեշեն և ժողովրդաշեն Հայրապետ:

Եղար անկում և բանիբուն քարոզիչը Բանին կենաց, ճշմարտության Ավետարանին քու խոսքովդ, քու գրչովդ և ողջ կյանքովդ: Ավելի քան կես դար անընդմեջ քարոզությամբ, ներհուն մեկնաբանությամբ և նախանձախնդիր եռանդմամբ տարածեցիր Քրիստոսի խոսքը քու ժողովուրդիդ զանվակներուն մեջ՝ անոնց հոգևոր հաղորդության և բարոյական առողջության ի վայելում:

— Երանի՜ քեզ, էջմիածնաշեն ու եկեղեցաշեն Հայրապետ:

Այս վեհավայրին մեջ՝ Սրբություն Սրբոց հայության հոգևոր սիրտը հանդիսացող Սուրբ Էջմիածնի մեջ, հավատացյալ եղբայրներ ու քույրեր, ուր որ դառնաք, որ անկյունը որ մտնեք՝ Վազգեն Ա Հայրապետի կնիքն է, դրոշմը է, որ պիտի զգաք: Ո՛ր քարին որ նայիք՝ այս գեղազարդյալ Մայր տաճարեն, Իջման Սբ. Սեղանեն, Վեհարանեն ու Գանձատունեն, հոգևոր դպրանոցեն սկսյալ մինչև աղբյուրները, մինչև Ապրիլյան հուշարձանը, ամբողջ Էջմիածինը շինվեց, բարեզարդվեցավ ի հայրապետության Տեառն Տեառն Վազգեն Առաջնո Կաթողիկոսի: Դուրս եկեք Սուրբ Էջմիածնի Մայրավանքի այս վեհավայրեն, քիչ մը անդին նույն անունն է, որ կխոսի Գայանեի, Ծաղկաթի, Հռիփսիմեի մեջ: Գացեք մինչև Երևան՝ քաղաքամայրը մեր, և այնտեղ Սուրբ Սարգսի տեսքով կխոսի շինարար Հայրապետը Հայոց: Գացեք մինչև Գեղարդ, անցեք մինչև Խոր Վիրապ և գացեք Հայաստանի հարավը՝ մինչև Սյունյաց աշխարհ, մինչև Տաթևա նվիրական վանքը՝ Վազգեն Ա Հայրապետի բառերը ձեր աչքերուն առջև արևի լույսին պես պիտի ծագին:

Բարեկամներ, ես հոգեկան աչքերով կտեսնեմ գալիք այն օրը, երբ Հայաստանյայց Եկեղեցվո 1700-ամյակին առիթով պատմության մեջ պիտի կոթողանա Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որուն վրա մեր ազգին ամենեն ազնվահոգի և երախտարժան բարերարներեն Ալեք Մանուկյանի անունին կողքին պիտի ըլլա Վազգեն Առաջինի անունը իբրև եկեղեցաշեն ու Էջմիածնաշեն Հայրապետի և ոսկի գրերով պիտի արձանագրված մնա մեր պատմության մեջ:

— Երանի՜ քեզ, ոգեշեն և գրքաշեն Հայրապետ:

Եկեղեցական սքեմեն առաջ, թե եկեղեցական սքեմին ներքև հետևողականությամբ և տքնաջան հավատարմությամբ եղար ոգիի կերտիչ, գաղափարների մշակ, հավատքի տարածիչ, կյանքի բրուտ, մեկ խոսքով ոգեշեն մի անձնավորություն՝ խոսքովդ, գրչովդ և մեր հայ գրականության, հայ մանկտվույն իբրև ուսուցիչ, իբրև գրող դուն բերիր քո սպասավորի անմոռանալի ժառանգը և զայն ավելցուցիր մեր Հայոց պատմության դպրության էջերում: Եղար գրի սպասավոր Սուրբ Մեսրոպի արժանավոր ժառանգորդ, գիտցար նրա գրչով պատարագը մեկնել, Մուսա Լեռան 40 օրերու հերոսներու ոգին ֆրանցվերֆելյան երգեցողությամբ տարածել մեր ժողովրդի հոգիներուն մեջ: Խրիմյանի շունչը, գաղափարները, տեսիլքները, հոգապաշտությունը, ժողովրդապաշտությունը ժողովրդին մեկնաբանել ու գիրքերովդ, հոդվածներովդ հոգիին, հավիտենականին, գերագույնին, բարիին, գեղեցիկին թարգման լինել:

— Երանի՜ քեզ, միասնաշեն ու միութենակերտ Հայրապետ:

Հայրապետությանդ 40-ամյա տարիներուն եղար ամբարտաւաների ոճրահարը և անխոնջ գործարարը Հայաստանյայց Սուրբ Եկեղեցվո միության;

Այո, նեղությանց, տագնապների, անհասկացողությանց, թյուր մեկնաբանությանց մեջ անցար և անցանք բոլորս, բայց երբեք և մեկ միության լույսը չմարեցավ աչքերուդ մեջ, միության հավատքը չցամքվեցավ հոգիիդ մեջ, և միասնության կամքը չթուլացավ անձիդ մեջ: Ես անձնական վկան եմ այս ճշմարտության, որովհետև 1956 թվականեն՝ վարդապետությանս առաջնաքայլ օրերեն մինչև կաթողիկոսական պարտականության այս ծանրագույն օրերը հետևած եմ Ձեզի և գործած եմ Ձեզի հետ, Վեհափառ, և զգացած եմ, որ տարակարծությանց ամպերը գնալում են և միասնության կապույտը հավերժ է երկնքին մեջ, ու բանաստեղծին՝ հայրենի բանաստեղծին բառերովը՝ «Հարդը գնում է, ցորենն է մնում»: Ցորենն է այդ միությունը, զոր իբրև հաց տվիր ամբողջ խոսքերուդ մեջ ու կյանքի և գործի մեջ: Այսօր ինձի հետ բերած եմ բուռ մը հող Անթիլիասի Կիլիկիո Կաթողիկոսության նոր կայքեն, տարագիր Աթոռի նոր կայքեն՝ խառնելու քիչ ետքը քու գերեզմանիդ Հայաստանյան հողին, իբրև Կիլիկյան աշխարհի խորհրդանիշ, որովհետև քու հերոսական ջանքերուդ որպես վկա ու կնիք և իբրև խաղաղություն, իբրև դրոշ այս հողը թող քու անմարելի սրտիդ կողքին մնա՝ գերեզմանիդ մեջ հավերժ: Եղար Ամենայն Հայոց Կաթողիկոս ո՛չ տիտղոսով, ո՛չ պաշտոնով, ո՛չ անունով միայն, այլ հավատքով, համոզումով, սիրո սրտով և ամբողջական ինքնամոռացումով: Համայն հայ ժողովրդի անխտրական ոգին թող Սուրբ կտակդ մնա անխառն և անխախտ՝ ի սեր մեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո ժայռանման ամրացումին և բեղմնալից առատաբերության ի վայելումն համայն հայ ժողովրդին:

— Երանի՜ քեզ, հայրանաշեն և ազգաշեն Հայրապետ:

Քրիստոնեական հավատքիդ Ալֆեոսյանին խոսքին հետ անքակտելիորեն սերտ և սերտ կերպով պահեցիր հայրենիքի և ազգիդ ապրումը, գաղափարը, ծառայության կամքը և զոհողության քրտինքը: Որքան Աստուծո մարդը եղար, որքան Եկեղեցվո սպասավորը դարձար, նույնքան եղար, մնացիր ու աճեցար իբրև Հայրենիքի մարդը, ազգին նախանձախնդիր ծառան:

Հայոց Սուրբ Եկեղեցին Քրիստոսի Եկեղեցվույն ճառագայթն է Հայաստան աշխարհի մեջ: Այսպես ըմբռնեցիր որպես ազգային Եկեղեցի՝ շաղախված մեր գոյության բոլոր դարերում, կյանքի բոլոր ավանդություններում և երբեք չեղար ազգայնամոլ ու օտարամերժ՝ ըլլալով ազգային, ընդհանրականը, որքան քեզ ճանչցա, Վեհափառ, տիեզերականության մեջ ըմբռնեցիր ազգիդ մասնավորության արժեքն ու գեղեցկությունը: Իսկ Հայրենիքի ազատության գաղափարը արևու լույսին պես մշտապայծառ ճառագայթեց հոգիիդ մեջ, անկախության տենչը վառեց կրակը աչքերուդ և եղար բանիբուն քարոզիչը անոր ողջ կյանքիդ մեջ՝ նույնիսկ լուռ կերպով զայն ապրելով խորհրդային կարգերու բռնակալության ճնշիչ օրերուն:

Ով կրնա մոռնալ, որ Սարդարապատի անունը որպես ղողանջ ազատության առաջին անգամ հնչեց Աստուծո բեմեն և իր սրբազան սրտեն: Մասունքի պես կպահեմ ես այն երկտողյանը, զոր 1988 թվականի փետրվարի 20-են ետքը ուղղել էր ինձի ըսելով. «Այս քարտը ուղարկում եմ Ձեզ Սարդարապատյան հոգիով և Ղարաբաղյան կամքով շիկացած Երևանեն»:

Ազատության շեփորահարը եղավ Վեհափառը և մնաց միշտ Արցախյան շարժումին զորավիգ՝ հայրաբար հորդորելով, որ խաղաղ միջոցներով լուծվի տագնապը և ամեն ճիգ գործ դրավ, որպեսզի արդար իրավունքներու այդ պայքարը սխալ ձևով չմեկնվի որպես կրոնական գունավորում ունեցող պայքար: Իսկ երբ ստեղծվեցավ Հայաստանի անկախ Հանրապետությունը, որ-

Սուրբ Պատարագի ընթացքում

Հրաժեշտի համբույրը

պես հայր ամենեցուն և հայրենասեր ու ազատատենչ Հայրապետ եղավ միշտ կողքին մեր Հանրապետության և անոր պետին, բոլոր պատասխանատուներուն և գերագույնն ի գործ դրեց թե՛ բարոյական, և թե՛ նյութական օժանդակությամբ և աջակցությամբ այդ Հանրապետության ամրապնդումին, հզորացմանը և ապահով գնացքին համար:

«Արժան և իրավ»· Սուրբ պատարագին բառերն են, որ կվերահնչեմ այս պահուն: Արժան և իրավ էր, վայել ու պատվաբեր մեր Հանրապետության համար, նախագահին և իր ավագանի պատասխանատուներին համար՝ հը.ռչակել զինքը որպես Ազգային Հերոս: Եվ երբ Աստուծո կներկայանա ճակտին քրիստոնյայի բառերուն կողքին «Ազգային Հերոս» պատվանունով իրեն պիտի ըսե Աստված. «Ազգի ծառայ բարի և հաւատարիմ մո՛ւտ յուրախութիւն Տեառն»:

— Երանի՜ քեզ, բարեշեն և բարեգործ Հայրապետ:

«Սիրտ մը փուխր, կակուղ, զգայուն, ընդառաջող բարյաց, ժողովրդյան: Զանձն քո եդիր ի վերա ժողովրդյան քո»:

Քանի՜ հազար մարդիկ կրնան վկայիլ, թե քու բարիքներդ են վայելած իսկ Գյումրիի աղետին առիթով Բարի Սամարացին՝ Սուրբ Էջմիածնի Մայրավանքը վերածեց օգնության և օժանդակության աղբյուրի մը: Հիմա Աստուծո ձեռքերին մեջ կերթաս՝ աղքատին, հիվանդին, կարիքավորին ձեռքը ձեռքիդ մեջ ու Աստված քեզ պիտի ընդունի իր Երկնային խաղաղության մեջ վերջապես:

— Երանի՜ քեզ աստվածաշեն Հայրապետ:

Եվ սա յոթներորդ երանին՝ պսակը բոլոր երանիներուն քեզ կտանի Աստուծո՝ տիեզերքի Արարչին, որպես անոր գործակիցը, Աստուծո սերը մարդու հանդեպ ցույց տված սիրույն մեջեն կճշմարտվի և կարտահայտվի: Աստված արարիչ չէ անցյալին, Աստված արարիչն է այսօր, խնամողը տիեզերքի: Մենք գործակիցներն ենք մեր կոչումով Աստուծո, ահա թե ինչու Աստված քեզի կըսե անգամ մը ևս. «Ազնիւ ծառայ, բարի և հաւատարիմ, մուտ յուրախութիւն Տեառն»:

Վեհափառ, վերջին անգամ շրթներս այս խորանին վրա տուր ինձի ըսելու՝ Դուն երջանկագույն Հայրապետներեն մեկն ես հայոց ազգին: Երջանկությունը շահված իրավունքդ է՝ տառապանքի մեջեն շահված և ծառայության մեջեն քեզի հատուցված:

— Երանի՜ քեզ, երջանկությանդ համար, որովհետև Դուն Աստուծո կամքով արդար վաստակովդ եղար վկան բռնակալության և գերության վերջալույսին և եղար ողջունողը ազատության արշալույսին, անկախության տեղաձաղկումին ի Հայաստան աշխարհս Հայոց:

Ո՞ր Կաթողիկոսն ունեցավ այդ երջանիկ պահը:

Առաջին Կաթողիկոսն եք, որ հրաժեշտ կառնե այս աշխարհեն հայ ժողովրդի կողմեն ընտրված իր պետական նախագահեն:

Վերջին հրաժեշտը ինքն է, որ քեզի կուտա: Երջանիկ եղիր, Հայրապետ Հայոց:

Առաջին Կաթողիկոսն եք, որ անկախ մեր հայ ժողովրդի հոգիին ամբողջական ու անպարփակելի սերը վայելեցիք:

Ի՞նչ հոսք էր Երևանի մեջ, ի՞նչ հոսք էր Էջմիածնի մեջ: Միլիոնավոր մարդ իմ աչքիս տեսությամբը եղավ, խոնարհեցավ քո անձիդ առջև:

Վեհափառ, մահդ անգամ եղավ քրիստոնեական ու հայրենասիրության սքանչելի դպրոց: Այս ժողովուրդը կերպարանափոխվեցավ մահվդ անգամ, որովհետև մահդ վերջ չէր անձիդ ճառագայթումին:

Ապրիր, ժողովուրդ Հայոց, որ այսպես գիտցար հարգել բազմավաստակ և բազմերախտ Հայրապետն Հայոց, և հիմա, երբ այլևս կդառնանք դեպի կյանք, օրհնիր մեզ, Վեհափառ, 20-րդ դարու այս վերջին հանգրվանիդ, երբ կպատրաստվինք 1700-ամյակը տոնելու մեր հայ ազգին: Ճամփադ թող ըլլա մեր ճամփան: Հայրենիքի ճամփով քայլենք բոլորս և կարենանք երթալ Աստուծո առջև ծունկի գալ և ասել. «Փառք քեզ, Տեր, որ այսպես քաջ հովիվ մը տվիր մեզի, հազար փառք հավիտյանս հավիտենից: Ամեն»:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Բ-ի խոսքին հաջորդում է Երուսաղեմի Հայոց Պատրիարք և Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի դամբանական խոսքը.

«Հուզումն որ կապրինք այս պահուն, հուզումն է սիրելիե մը բաժնվելու վերջին պահուն:

Մենք բոլորս, այս Սուրբ Տաճարին մեջ և անոր շուրջը հավաքված, ամեն ազգի սգակիր բարեկամներով, և հայ ժողովուրդի հոգիին արտահայտիչ բազմաշնորհ ներկայացուցիչներով, և նույն ժամանակ մեզի հետ ունենալով Հայաստան աշխարհի տարածքին և ի սփյուռս ցրված՝ հայորդիները, մեզի հետ սրտով զգացակից, մեր հարգանքի վերջին տուրքը կը մատուցանենք Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարքին և Սրբազնագույն Կաթողիկոսին, հանգուցյալ Տ. Տ. Վազգեն Առաջին Հայրապետին:

Անոր հյուծած մարմինը պիտի հանգչի երանաշնորհ մեր մյուս Հայրապետներու կաթողիկոսական դամբարաններու շարքին, իր սիրեցյալ Խրիմյան Հայրիկի գերեզմանին կողքին, դեմ-հանդիման Սուրբ Տաճարին:

Հողին պիտի հանձնենք տառապակոծ այն մարմինը, որ իր աշխուժության բոլոր տարիներուն, անխոնջ կերպով ծառայեց զինքը մտրակող հոգիին, որ ինքզինքը ամբողջովին նվիրած էր հոգևոր ծառայության, իր ազգին ու Եկեղեցիին սերեն մղված, և ազգերու խաղաղ համագոյակցության իդեալներով խանդավառված:

Եվ մենք այսօր կգանք վախճանը մեր արդյունաշատ Հայրապետի քառասուն տարիներու նվիրումին, անձնազոհության, իմաստության և շնորհներուն:

Իր կյանքի վերջին շաբաթներուն, իր հյուծած ձայնով արտասանված իր պատգամը լսելու պատեհությունը ունեցողներ պիտի չմոռնան անոր շնորհալի ժպիտով խառնված հավաստումը. «Այլևս մահեն չեմ վախնար ես: Միայն թե կսպասեմ, որ գա ու վերջանա»:

Քրիստոնեական իր հավատքին ամենեն քնքույշ, բայց ուժեղ արտահայտությունն էր այդ:

Քրիստոնյային համար կյանքին խորհուրդը կնույնանա «Քրիստոսով ապրելու նպատակին հետ, որով յուրաքանչյուր անձ ինքզինք հաղթական կզգա դժնդակ կապանքներեն և մարմնի ցավերեն, և սաղմոսերգուին հետ կկրկնե. «Համբերությամբ սպասեցի Տիրոջ, որ նայեցավ ինձի, և լսեց իմ աղոթքը: Նա ինձ դուրս հանեց տառապանքի փոսեն» (Սաղմոս ԼԹ. Զ—Յ):

Մահը, որպես երկրորդ ծնունդ, քրիստոնյայի՝ հույսի՛, և Քրիստոսով Հարության՝ լույսի՛, այսինքն դեպի հավերժական կյանք ընթանալու առաջին կայանն է:



Հրաժեշտի խոսք Նորին Ամենապատվություն Կաթողիկոսական Տեղապահ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսի

Հողի օրհնության պահ՝ ձեռամբ Թուրքիոյ հայոց Պատրիարք
Ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Գազանճյանի

Մենք կհավատանք Քրիստոսի կենսապարգև խոսքերուն. «Ես իսկ եմ Հարություն և կյանք: Ով որ ինձ կհավատա, թեպետ և մեռնի, պիտի ապրի» (Հովհ. ԺԱ 25):

Այս ճշմարտության կենդանի վկայությունը ցուցաբերեց մեր ժողովուրդը, իր սերն ու հարգանքը արտահայտելու իր այլազան կերպերով: Քաղաքամայր Երևանի Ս. Սարգիս եկեղեցիեն սկսելով, մինչև Մայր Աթոռ Ս. Էջմիածին, համազգային թափոր մըն էր, ամեն տարիքի հայորդիներու:

Հուզիչ ու արտասանդիչ:

Այս պահուն, երբ մենք հրաժեշտ կուտանք մեր սիրեցյալ Հայրապետին, երախտագիտության զգացումով կլեցվինք մեր առաջին մասնակից ունենալով Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Գահակալը՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Վեհափառ Կաթողիկոսը, Կ. Պոլսո Ամենապատիվ Պատրիարքը՝ Նորին Ամենապատվություն Տ. Գարեգին արքեպիսկոպոս Գազանճյանը, նաև մեր հայրենի երկրի վսեմաշուք նախագահը, կառավարության և իշխանության ներկայացուցիչները, մեր քույր Եկեղեցիներու բարձրաստիճան հոգևորականները, ինչպես նաև ներկայացուցիչները տարբեր երկիրներու կառավարական և հասարակական կազմակերպություններու:

Ծանր է մեր վիշտը:

Խորունկ է հուզումը, որ կապրինք բաժանումի այս պահուն:

Կաղոթենք, որ մեր հավատքի լույսը անմար մնա, ինչպես Լուսավորչի կանթեղը Արագածի կատարին, որպեսզի կարողանանք հավատարմորեն մեր սրտերուն մեջ վառ պահել հիշատակը Վեհափառ Հայրապետին: Եվ շարունակենք ապրիլ ու գործել՝ անոր մեզի կտակած հոգիի աշխուժությամբ, հայրենասիրությամբ, մարդասիրությամբ, մեր պատմության և մշակույթի ազնվագույն իրագործումներուն սիրով, և անոր հոգիին մեջ յուր մանկության օրերեն տարագիր հայու «Անկախ Հայաստանի երազանքին» իրականացման հրճվանքով, և իր հոգիին ամենեն աննահանջ և մշտամրմունջ ոգևիքը, և գուրգուրա իր ժողովրդի զավակներուն վրա:

Հոգիդ անմեռ և հիշատակդ անմար մնա հավերժ, երանելի Հայրապետ Ամենայն Հայոց»:

Հավարտ սուրբ պատարագի, շարականների սրբազան երգեցողությամբ Վազգեն Ա. Հայրապետի մարմինը դուրս է բերվում տաճարի արևմտյան դռնից և թափորով հյուսիսային կողմից պտույտ կատարելով համապատասխան հանգիստներով, աղոթքների, սաղմոսների և Ավետարանական ընթերցումներով տարվում է արևմտյան կողմ, զանգակատան կողքին նախապես պատրաստված գերեզմանափոսի մոտ: Եվ կարծես Վեհափառը համակ աղոթք ու խնդրանք դարձած ասում էր. «Օրհնագէտ արա զիս Տէր՝ ի ճանապարհի քում, քանզի խնդրեցի զալ առ քեզ դառնալ անդրէն ի հող յորմէ ստեղծայ. այլ առ քեզ միայն պաղատիմ Հայր Երկնաւոր. Տէր յոյս իմ օգնեա ինձ»:

Թաղման կարգի ծիսակատարության ավարտին, մինչև մարմնի գերեզմանափոս իջեցնելը, Վեհափառին իր և հանրապետության իշխանություններ խոնարհումի խոսքը բերեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը.

«Սիրելի հայրենակիցներ, մեծարգո հյուրեր:

Այսօր ազգացող հայ ժողովուրդը հայրենյաց սուրբ հողին է հանձնում

և դեպի երկնային արքայություն ճանապարհում իր ամենամեծ երախտավորներից մեկին՝ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Վեհափառ Հայրապետի շուրջ քառասնամյա գահակալությունը, որ համընկավ ստալինյան բռնապետության թոթափման, մտքի ազատագրման ու մարդկային արժեքների վերականգնման տառապագին տարիներին, եղավ համակ նվիրումի, եկեղեցական բարեշինության եւ ազգային զարթոնքի լիապարփակ ժամանակաշրջան:

Եվ թեև ժամանակաշրջանում մակընթացություններին հաջորդեցին նաև տեղատվություններ, ձեռնարկվեցին մտքի ու խղճի ազատության նորանոր սահմանափակումներ, բորբոքվեցին անհարկի ներեկեղեցական տարաձայնություններ, բայց Վեհափառ Հայրապետը, միշտ գտնվելով ամենայն հայոցի բարձրության վրա, իմաստուն և հավասարակշռված գործունեությամբ, անվրեպ ձեռնարկներով ու ծանրակշիռ խոսքով կարողացավ Եկեղեցին ու իր հոտը հեռու պահել աղետալի փորձություններից և անվերականգնելի կորուստներից:

Դրա համար պահանջվում էր, իհարկե, երկաթյա կամք, ծով համբերություն, խոր իմաստնություն ու հեռատեսություն, հատկանիշներ, որ նախախնամությունը բարեբախտաբար Վեհափառին չէր զլացել:

Հասուն կյանքի ավելի քան յոթանասուն երկարաձիգ տարիների ընթացքում զգայասիրտ Հայրապետը լիովին կիսեց իր ժողովրդին բաժին ընկած բոլոր տառապանքները և հայրենասիրական պարտքի ու հովվապետական պատասխանատվության բարձր գիտակցությամբ ջանաց ամոքել նրա ցավերը, թեթևացնել նրա բազմազան հոգսերը:

Վազգեն Վեհափառը, սակայն, բախտն ունեցավ նաև վայելելու իր ժողովրդի տարած հաղթանակները, հրճվելու նրա հաջողություններով, վերապրելու զանգվածային ներգաղթի ոգևորությունը, մասնակցելու եռպատնրազմյան Հայաստանի շենացմանը, ակնատեսն ու ականատեսն լինելու արցախահայության հերոսամարտի և ողջունելու Հայոց պետականության վերականգնումը:

Երիտասարդական ավյունով նա լծվեց նորանկախ Հանրապետության ամրապնդման սրբազան գործին՝ այն վեր դասելով մնացյալ բոլոր ժամանակավոր ու անցողիկ խնդիրներից, անչափ ոգևորվեց **«Հայաստան»** համահայկական հիմնադրամի ստեղծման գաղափարով և իր անձնական օրինակով ու անմիջական մասնակցությամբ քաջալերեց նրա հաջող ընթացքը:

Զնայած երկրի ներկա տխուր իրավիճակին, առկա հսկայական դժվարություններին, սոցիալ-տնտեսական ծանր խնդիրներին, Վեհափառ Հայրապետը, օժտված լինելով հիմնականն ու երկրորդականը, անցողիկն ու մնայունը զանազանելու բացառիկ շնորհով, մինչև վերջին շունչը մնաց լամամբ:

Հայ Առաքելական Եկեղեցու 1700-ամյա պատմության մատյանում Վազգեն Վեհափառը երջանկություն ունեցավ դասվելու հազվագյուտ Կաթողիկոսների շարքը, ովքեր իրենց ազգին ծառայեցին Հայոց անկախ պետականության գոյության պայմաններում՝ դրանով հնարավորություն ձեռք բերելով բազմապատկելու հովվապետական գործունեության արդյունքները: Վեհափառն այսպիսով իր անձնական օրինակով ևս մեկ անգամ հաստատեց ազգի բնականոն գոյության երկու անհրաժեշտ պայմանների՝ պետության և Եկեղեցու ճակատագրի միասնության անառարկելի ճշմարտությունը:

Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը ընթերցում է հրաժեշտի խոսքը

Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Իլիա Բ-ն
ընթերցում է հրաժեշտի խոսքը

Նա թողեց, սակայն, նաև անկատար մի երազ, որի իրականացման համար թեև չխնայեց որևէ ջանք, մանավանդ գահակալության վերջին տարիներին: Այդ երազը Հայ Առաքելական Եկեղեցու միասնության և ավանդական ճվիրապետության վերականգնումն էր, որը որպես սուրբ պատգամ հանձնվեց մեր սերնդի խղճին:

Վեհափառ Հայրապետը աշխարհից հեռացավ խլյակ դարձած մարմնով, բայց նրա փառավորված հոգին գնաց ճախրելու երկնային արքայության մեջ Լուսավորչի, Սահակի, Մեսրոպի, Ներսես Շնորհալու, Խրիմյան Հայրիկի անմահ հոգիներին թևանցուկ:

Վազգեն Կաթողիկոսի լուսավոր կերպարը հավերժ կմնա յուրաքանչյուր հայի բաբախող սրտում որպես եկեղեցաշինության, անձնվիրության, հայրենասիրության և հաստատության անանց խորհրդանիշ, իսկ նրա աղոթքները որպես պահապան հրեշտակներ մշտապես կհսկեն մեր փշոտ ուղին»:

Ապա հանուն Վրաց Եկեղեցու և ժողովրդի իր հրաժեշտի խոսքն ասաց Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Բ-ն:

«Սիրելի հայ ժողովուրդ, թանկագին նախագահ, սիրելի քրիստոնյա եղբայրներ և քույրեր, տիկնայք և պարոնայք,

Մեծ է այսօր Հայ Առաքելական Եկեղեցու և հայ ժողովրդի վիշտը: Նա հրաժեշտ է տալիս իր իմաստուն, մեծարժան, գերագույն Հովվին, որը գրեթե քառասուն տարվա ընթացքում, դժվարին պայմաններում, առաջնորդել է Էջմիածնի հնագույն կաթողիկոսական գահին:

Մենք եկել ենք Վրաստանից, որպեսզի ի խորոց սրտի ցավակցենք ձեզ:

Այսօր կրկին զգում ենք այն մեծ դերը, որով աշխարհ է գալիս յուրաքանչյուր մարդ:

Մեր պատմության ամենաբարդ ժամանակաշրջանում նա էր՝ սրբազնագույն Վազգեն Առաջինը, որ համարձակորեն հանձն առավ դժվարագույն խաչի ծանրությունը, խաչի, որի ուժով հոգեպես պիտի փրկվեր հայ ազգը և Եկեղեցին Հայոց:

Հայաստանի Կաթողիկոսական գահն իրեն վստահելուց հետո, տակավին երիտասարդ, նա ի սկզբանե սուրբ նպատակ համարեց ազգի միասնությունը և հսկայական ավանդ ներդրեց այդ գործում:

Այն ժամանակ, երբ խզված էին կապերը արտասահմանյան երկրների հետ, Նորին Սրբություն Վազգեն Առաջինը կարողանում էր կենդանի կապեր հաստատել հայրենիքից դուրս ապրող հայ համայնքների հետ և նրանց մեջ խորացնել հայրենասիրության զգացումը:

Հենց այդ առիթով՝ նրա նախաձեռնությամբ և կոչով շատ ու շատ ընտանիքներ վերադարձան Հայաստան:

Վեհափառ Վազգեն Առաջինի հովանավորությամբ արտասահմանից ժամանած բազմաթիվ երիտասարդներ ավարտեցին Սուրբ Էջմիածնի հոգեւոր ճեմարանը: Այսօր նրանք արդեն աչքի ընկնող հոգևոր անձինք են ինչպես Հայաստան աշխարհի, այնպես էլ նրա սահմաններից դուրս գտնվող եկեղեցիներում ու թեմերում:

Վեհափառը առանձնապես մեծ հոգատարություն ցուցաբերեց տաճարների և վանքերի վերականգնման, վերանորոգման, ժողովրդի հոգևոր մասկարողակի բարձրացման և հաստատման գործում: Ընդհանրապես նրա գործունեությունը բեղուն և համակողմանի էր: Իրավացի են պնդումները, որ

Նորին Սրբությունը կարճ ժամանակամիջոցում կարողացել է անել այնքան, որքան կդժվարանային ուրիշները:

Հսկայական է նրա վաստակը խաղաղության պաշտպանության գործում:

Անչափելի է նրա վաստակը ուղղափառ և ուրիշ Եկեղեցիների հետ բարեկամական ու բարիդրացիական հարաբերությունների հաստատման մեջ:

Վրաստանի և վրացական Եկեղեցու կյանքում նա միշտ մեր ուրախությանը կամ ցավին մասնակցողը, կիսողն է եղել: Հաճախ է այցելել Վրաստան և իր սրտի ջերմությունն է ցուցաբերել մեր երկրի նկատմամբ: Անշուշտ, մեր պետականությունը ևս շատ անգամ է եղել Հայաստանում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

Մեր ժողովուրդը, մեր Եկեղեցին բարձր գնահատեցին այն նյութական օգնությունը, որը Նորին Սրբություն Վազգեն Առաջինի օրհնանքով ճգնաժամի պահերին տրվել է վրաց ժողովրդին:

Այսօր, դժբախտաբար, ավելի բարդ ժամանակ է ինչպես Վրաստանի, այնպես էլ Հայաստանի համար, բայց հուսով ենք, մեր երկրներն Աստծո կամքով և մեր անխախտ հարաբերությունների ուժով կկարողանան լուծել եղած հիմնահարցերը: Խոչընդոտները հաղթահարելու հարցում մեզ կօգնի մեր մեծանուն թագավորների, պատրիարքների, մարտիրոսների և արժանի հայրերի օրհնանքը:

Մեր հնագույն Եկեղեցու և վրաց ազգի անունից կրկին հայտնում եմ մեր խորին վշտակցությունը: Դուք մեծ հոգևոր հայր կորցրեցիք, մենք՝ հոգևոր եղբայր ու բարեկամ:

Աղաչում ենք Տիրոջը, որ նա Վեհափառի անմահ հոգին դրախտում հաստատի, դրախտում, որտեղ հանգչում են հայ ժողովրդի շատ ու շատ մեծերը:

Ամեն»:

Ամբողջ հավատացյալ ժողովուրդը հանակ լռություն դարձած արցունքաթաթախ սրտերով սպասում էր իրենց համբուրելի Հայրապետի վերջին տեսության: Անհավասիկ Վեհափառի մարմինը իջեցվեց դամբարան, և թվում էր, թե Հայոց Հայրապետը վերջին հայացք գցելով մշտանթարթ Արարատին, հոգեկոչող Սուրբ Էջմիածնին և իր շուրջը խմբված հոգևոր և աշխարհիկ դասին ու հավատացյալ ժողովրդին, բարբառում էր. «Աղօթս արարէք վասն իմ հարք իմ, եղբարք իմ և որդիք, օրհնեսցէ զմեզ Քրիստոս Փրկիչ մեր. պահեսցէ հաստատուն ի հաւատս իւր՝ մինչև ի սահմանեալ կետ կոչմանս այսորիկ. և խաղաղութիւն Տեառն եղիցի ընդ ձեզ յաւիտենից յաւիտեանս, Ամէն»:

Հավերժ լույս քեզ, Վեհափառ, այժմ Տիրոջ օթևաններում վաստակիր և վայելիր քո այնքան քարոզած հավիտենական խաղաղությունը: Իսկ Լուսավորչաշավիղ ժառանգիդ համար վստահ ենք, որ նաև այս պահին քեզ հուզող մտահոգության խնդրով աղոթք բարձրացնելով առ բարեգութն Աստված, ասում ենք. «Աղաչեմք զքեզ Տէր Աստուած արարիչ հոգւոց և մարմնոց, մի՛ երբէք ընդ վայր հարցես զհօտս սորա և զհաւատացեալս քո հօտ՝ թողլով անհովիւ. այլ տացես այր ի վերայ ժողովրդեան քոյ՝ զոր և լցուցես Հոգւովդ քով սրբով լինիլ նոցա հովիւ ըստ սրտի քում հովուել զնոսա իմաստութեամբ: Ամէն»: